Հիմնավորում

Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 246-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել «Պռոշյանի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմինե Սահակյանը՝ «Պռոշյանի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու և կանոնադրությունը ճշտված հասցեով հաստատելու խնդրանքով: Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, 34-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշումը և «Պռոշյանի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 6-ի գրությունը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 246-Ա որոշման հավելվածում կատարել փոփոխություն և «Պռոշյանի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ՝ ճշտված հասցեով:

Տեղեկանք

Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 246-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 246-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի բյուջեում եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի ենթադրում:

Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի բաժնի պետ՝ **Գ. Արմենակյան**